

## ԲՈՎԱՆԴԵԿԱՆԻ ԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ – ԲԱՐՁՐԱԿԱՆ.

- |    |  |       |     |
|----|--|-------|-----|
| 1. | ԱՆՆԵՐՆԵԼԻ ՄԵԴԱՋ  | Կ. Վ. | 155 |
| 2. | ԲՈՒԺԵԱՆԱ ԽԱՆՊԵՐ ՆԱԿԱՏԱՆԱՅՔ ՄԵՐ Ա ՏՎԻԲԹԱ-<br>ՐԱՅԻՆ ՀԱյերի ՈՒՆԵՎԱԾ ՀԱյեացը | Կ. Վ. | 155 |
| 3. | ԵԿԵՂԵՑՎԱՆԱՆ ՔՐՈՂՈՒԽՈՌՈՒ  | Վ. Ք. | 169 |

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.

- |    |                                      |              |     |
|----|--------------------------------------|--------------|-----|
| 4. | Գարոն (բանատեղութիւն) Յ.             | Եռվանանիսխան | 168 |
| 4. | Համամ Աքեւեցիք                       | Ղ. Կոտսանան  | 169 |
| 6. | Համեմատական տափառակ Պատմ.            | Աղոյանից     |     |
| 6. | Կաղանական Եւ գիրը Թէնոց (իջէլ) Խ. Վ. |              | 176 |
| 7. | ՄԱԾՆԱԾՈՍՈՐԻԹԻՒՆ Երգուան Յ.           | Մալիս. Փիմե  | 179 |

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

8. Արդի վիճակ Հազկանայց - Թ. թ. Խ. Զուղայեցի 180  
9. Դերսիմ (Տարուակութիւն) - Ս. Հայկունի 185

ԱԶԳԱՅԻՆ

- |                         |     |
|-------------------------|-----|
| 10. ԱՎԱՐԱՍ - ՈՒԽՈՒԹԻԶ   | 483 |
| 11. ՏԿԵՂՅՑԻ ՎԱՅԱՏԱՆՆԱՑՑ | 487 |
| Մայր Աթոռ.              |     |
| 12. ԵՐԵՎԱՆԻ ԹԵմ.        |     |
| 13. ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵմ.       |     |
| 14. ԱՆԴՐԱԲԱՆԻ ԹԵմ.      |     |
| ՏԱՅՆԱՎԱՅՐ               |     |

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ Գ.

ՅԱԽԵԼՈՒԽԱԾ.

Յովհան Օմեցու ճառը. 192

Ասանիա Եփակացի (Տարունակութիւն) գ. Տ. Մ. 499  
օգոստոսի 20-ին

ԱՐՄԵՆԻԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՀՅԵԱԿՈՍԻՆ ԲԱՑԱՐԱԾՈՒՅԹԻՆ

ՅԱԼԵԼՈՒՄ ԱՐԱՐԱՏԻ 1896 թ. ԱՊՐԻԼ

Յովշաննու իմաստափրի, չպց կաթուղիկո-  
սի խոստվանովմին անշարժ յուսոյ մարմ-  
նալոյ բանին քրիստոսի, եւ ընդդեմ դաս-  
նողաց գմի քրիստոս յերկուա բնութիհնս:

Զաստուածաբանութիւն աստուածածնելութեան բանին Հօր ոչ ոմանք ստոյգ հաւատոց այժմ ստորոգեն՝ զայն որ ի հայրական ծոցոյ և ի թափանցիկ լուսոյ և ի գերազանցեալ փառացն իթանձրագիտակ մարդկայիննա բնութիւն ի խոնարհ թափեալ և քաղաքավարեալ յայտնեցաւ՝ պատղաբերել չեթանուաց եկեղեցւոյ և ոչ ուղղակի գաւաննեն ըստ ինքնագիմուրար աւետարանին քարոզիցն, յորմէ հանգիսպի հալորդութիւնն մորդկութեանը առ Աստուածութիւնն. և ոչ զաստուածային շնորհացն բազմապատիկ պարգես և զմեծ և զիրկական զմարհուրդն յինքեանս նախատպաւորեն ըստ զեղմանն անձրեահոս ցողոց որ ոռոգեացն զանպացութիւն մարդկան ի կուտարիշան երաշտութենէ՝ բողոքեալ բուրեն ընդհանրական եկեղեցւոյ այլ քակեալ միանգամայն իսկ զիմն ուղղափառ հաւատոց և հայեցեալք յայս մոլորութիւնն և ի վարդապետութիւնն զիւաց և հարեալք իւրեանց խղճի մոտք զթանձր մորուս յառաջ ձգեն, որ յաղաբողոնս պերճացեալ պտ-

ճուծին, և բարձրայօն պարզին ըստ սակի ամբարտաւանից՝ և զեղեգումն մտաց զինէկամութեան ի գործ արկեալ՝ վրիփումն գլորման ճաշակեն, ոչ ստորաքննելով զիթագուցեալն ի նմա դառնադպյն քան զիեղի մախանցն բոց, յորմէ յզացեալ ծնանի նոցա զանազան և զարտմաքեր չերեալիկոսութիւնս:

Այսպէս օտարացեղութիւն սոցա ի  
մէջ առեալ և յաւէտ բացընկեցիկ յուղաւ-  
փառ աւանդիցն լեալ և զշիւսակս Գ. կղիս  
սուրբ ժողովոցն խզել հանդիսացեալ որ ի  
Նիկիայ Բիւթանացոց սակս Արքիոսի և որ ի  
կոստանդնուպօլիս փասն հոգեմարտիկն Մա-  
կեդոնի և որ յՆիկեսոս յԱսիայ յաղագս  
յիմարտութեան Նեստորի և մտախաք ի-  
մացուածիւ ըստ գողօնի օցտողաց և ի բար-  
ւոյն վրիպեցուցանողաց հակածառին ընդդէմ  
ճշմարտութեանն ըստ նեստորականացն ի-  
մացմանց և յետ անձառ միաւորութեան բա-  
նին և մարմնոյն երկուս ընութիւնս բաժա-  
նաբար սահմանեն ի մի Տէր Յիսուս Քրիս-  
տոս, երկուս կամս և երկուս ներգործու-  
թիւնս և ոչ մարգացելոյն Աստուծոյ ի որը-  
բոյ Կուսէն խոստովանին զիիրս, այսինքն ըլ-  
խաչ և զմահ որ վասն յաշնարհի, այլ յա-  
տուկ մարգոյն միայնոյն և եթէ զարգարեալն  
և խաչեալն ոչ է Տէր և ոչ Փրկիչ և ոչ Աստ-  
ուած և որդի Աստուծոյ: Այսպէս ի ներքս  
ի խորոջ անդ զմիտս ամբարշտութեան ցուց-  
եալ՝ յափշտակեն զտկարս, գիտութեամբ ի  
հրապուրանս բանից արկանելով և արբու-  
ցանեն կղերց եկեղեցւոյ զպղտորութիւն մո-  
լորութեան և զհակառակաբանութիւնս յո-  
չինչ պիտանացու: Եւ զոր խարգախտութեամ-  
բըն թագուցանել համարին, զնոյն յայտնա-  
պէս ցուցանեն զմղար միտս և զհերետիկոս  
ի զուագարութիւնս զոր ոչ ասել իսկ պարտ  
վարկանի եկեղեցի ուղղափառաց և ոչ լսել  
վասնզի յաւէտ իմն հեռի և օտար և ի  
բացեայ է յառաքելական վարդապետութիւ-  
նէ:

Վակայն մեք աստանօր ոչ պարտիմք  
լրութիւն միայն պատուել, զի մի ի հա-  
կառակաց մեղիցիմք, կամ թէ երկբա-  
նութիւն ինչ ի մէջ անկցի կամ մե-  
ծաբանութիւն, կամ թէ պատճառս ինչ  
տրանժման գտեալ և ևս առաւել զհրաբրո-  
բըն բգիւն չարութիւն և աճեցուցեն զգը-  
ժոխվմբեր զգացումնն Ա.լ ընդդիմացուք  
նոցա ու զգափառ հաւատոց մարտիւ և սան-  
ձահարեալ հանդիսացուք զիստերախ խար-  
դաւանս հերձուածողութեան և վերջատան-  
ջել զյուղնահոս և զբազմատարած գիշերա-

մածն խաւար, զի թերեսս լուսութիւն եկեղեց-  
ոյ Քրիստոսի ըստ սրբոց հարցն աւանդից  
գերապայծառ և անշիջանելի փայլեսցէ, և  
ճշմարիտ հաւատոցն բարեմտութիւն ծաղկա-  
նետեալ բողոքեսցէ, և բարբարոսական երկ-  
րացութիւն կամ տարահաճնելի նսեմական  
ինչ թագուցեալ միտք ի բաց տարեալ տրոհես-  
ցին. և առհասարակ ամենեքեան ի մի առա-  
ւելութիւն պատուոյ թեակախեալ եղանիցեմք:  
Արդ այսուհետեւ ես աստ ոչ զհարուստ բա-  
նից պատումանս ինձ ինքն հայցեմ; այլ զաստ-  
ուածացունչ Գրոց սրբոց աներկրայ հաստա-  
տութիւն և զհարցն հաւատոց դաւանու-  
թիւնս, որ կարող են առավալել զբոլոր ամ-  
բարշտութիւնս և հաստատել զողջախոչ  
հաւատոցն խորհուրդս որ ի Քրիստոս:

Եւ նախ սկսայց ուստի սկսանելին լաւա-  
գոյն է և ասայից որ զմէնջ ամբաստանու-  
թիւնն ստոցն չերէսիոտաց: \* Զի միշտ հան-  
դիսանան ստեղծանել յարել ի մեզ զշարա-  
հագագ մտածմանցն առարկութիւնս, որ ըս-  
տորահոսեալն ի յանգունգս խաւարին տար-  
տարսոին և զմահորոնն է զգեցեալ թիւնս,  
զոր ոչ իսկ ամենելին բնաւին գիտեմք, և  
անզր է քան զբնաւ ասելի մտածմունս մեր  
և միայն ինքեանէ իսկ յասոց ըերի թուլա-  
կի խորհրդոց յեղափօխումն, զի թերեսս զիւ-  
րեսնցն կարասցեն կացաւցանել և արբու-  
ցանել զար ուիիցն ամրոպաս: Եւ արդ օն ա-  
ռեալ զարհամարհելիոն նոցա բանս ծիծա-  
ղելիս՝ յարկացուցից \*\* և տապալեցուցից ի  
զօրութենէ պատրաստ օգնականին մերոյ  
Քրիստոսի, թերեսս և փախեցից \*\*\* ձեզ շը-  
նորհս ինչ հոգեւորս առ ի հաստատել զձեզ:  
Էնդէք ըրնաւ ազատութիւնս մեր այսպէս  
զատիցի յայլոյ խզճի մտաց, որք անդուռն  
ըերանով ասեն զմէնջ ասել յարելաբար ի  
ձայնակցութեանց Մանես գոլ և Մարկոնի  
և Բարդեծանի և Եւտիքեա: Զի նոքա նմա-  
նութեամբ իմն ասեն և ստուերական հան-  
գամանօք և կարծեօք երեւել \*\*\*\* յաշխարհի  
զաշխարհափրկիչն \*\*\*\*\* Քրիստոս, և կամ թէ  
սա Վաղենտիոսի, որ ոչ ի Մարիամայ, այլ  
յիւրմէ ընութենէն շրջեալ և արաբեալ ա-  
սէ Բանին իւր մարմին չարչարական: Ոչ այդ-  
պէս ստգատանին միտք մեր ի միամտութենէն  
որ ի Քրիստոս, և որ այլազգ ունիցիցի որ քան  
զեղեալն որ է Յիսուս Քրիստոս, ի նմանէն  
ի բաց փախչիմք և օտար վարկանիմք յԱս-  
տուծոյ և ընդհանրական եկեղեցւոյ: Վասն

զի որ ըստ հարցն սրբոց ևս ուղարկառաց  
աւանդեցան մեծագոյն հաստատութեամբ  
խոստովանութիւնք՝ ոչ տան մեզ թոյլ յերկ-  
րայս լինել կամ տարագրել ի ճշմարտութե-  
նէ անտի, կամ ի բղիմանէ անտի հարաբո-  
բոքն բարկութեան տոչորել այսինքն յան-  
կարգ և յամբարիշա և ի հերետիկս լեզ-  
ուաց, որք սիրեցին զարութիւն քան զիսոսս ար-  
դարութիւն՝ զանօրէնութիւն քան զիսոսս կործան-  
ման և զեզուս նենդաւորս: \*

Արդ որք զիանն Աստուած յեղափոխեալ  
ասացին ի մարմին և յուկր, ի նեարդու և ջի-  
լըս և ի բովանդակի իսկ ի բնութիւն մարմնոյ,  
նոքին իսկ են, որ ընդ ամբարշտութեանցն  
կուապաշտեալ վայրազարկեցան և ընկճեալ  
կործանեցան: Քանզի ոչ եթէ Բանին բնու-  
թիւն շրջեցաւ ի մարմին և յուկերս, և ոչ  
եթէ ինքն յինքեան բնակեաց ի մերումն  
բնութեան, զի ի Նմա բնակէ ամենայն լրու-  
մըն Աստուածութեան մարմնապէս: \*\* Սա-  
յապէս և որ Բանին Հօր և որ ի Մարիա-  
մայ մարմինն էր, եթէ ասիցէ ոք ի մի բնու-  
թենէ անգոտին յառաջ եկեալ ի նզովս ուղ-  
զափառ եկեղեցւոյ հակամիտ գտանի, և որք  
ասենն թէ պիտակապէս զնմանութիւն միայն  
և ոչ զբնութիւնն մերոյինս մարմնոյ զգեցիեալ  
էր Տեառնն՝ ընդ անհաւատ տուժեցին: Եւ  
որք ի բանս ապիրատս ախտաժետեն՝ թէ  
աստուածային ըընութիւն, որ էր հաւատոր  
Հօր առանձնակի թլփատեցաւ և կամ մնկո-  
տար երբէք ի կատարելութենէ եղեւ, և կամ  
թէ ի խալին ըեեռեալն ոչ էր մարմին Բա-  
նին, այլ նոյն ինքն Արարիչ բնութեանն, որ  
էր իմաստութիւն Հօր այնպիսիքն պարտա-  
պանք եղիցին ընդ մծնէս զրոշմիւ: Ով ոք  
երբէք ի կղերկիսաց եկեղեցւոյ այնպէս  
յանգնեալ ժարհիցի, կամ կշառագտից: \*\*\*  
զինքն ի խորհուրդ չար հերետիկսաց, մին-  
չև ասել հաւանիցի, թէ ընութիւն մարմնոյ  
նախ քան զառնուլն ի Մարիամայ էր, և էր  
մարմին աներեւոյթ և անտես՝ եթէ այդպէս  
է, ասս Նա իսկ էր Բանն: և գարձեալ թէ  
մի բնութիւն էր Բանին և մարմնոյն և կամ  
թէ շրջեալ փախեցաւ Բանն ի մարմին՝ ինքն  
ապա վասն իւր պատարագի և ոչ վասն աշ-  
խարհի և զինքն միայն փրկէ և ոչ զրոշոր ե-  
զականս: ի բաց տարեալ տրոհեցի ի մէնջ  
այսպիսի դրէմ խոս և ապիրատ խորհրդոց  
առարկուածք:

Զի որ զզաւակէն Արրահամու ըուռն

\* օր. 58. հնքսփոսաց: \*\* օր. յարակացուցից:  
\*\*\* օր. փոխնեցին: \*\*\*\* օր. երեւեալ: \*\*\*\*\* օր. յաշխար-  
հափրկիւն:

Հարկանէր՝ \* ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանիւ նոյն ինքն ի կուսէն զմարմինն առեալ և միացուցեալ ընդ բանին որպէս և իւր իսկ վասն մեր զնա պատարագէ, վասն զի բանն Աստուած և Որդին ճշմարիտ, որ ի ճշմարտէ չօրէ ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս և բարձրեալ և ամենակալ և վերապայծառ լոյս՝ բառ որում և ծնօդն, և նոյն ինքն զօրութիւն չօր և աջ և բազուկ և կարողութիւն և ճառագայթ և ծնունդ էութեան, և հանգոյն և հանգէտ զօրութեամք՝ գործակցութեամք ընդ չօր և ընդ չոգույն Արբոյ Որդի մշտենչենաւոր ի ընութենէ չօր։ Եւ մինն միայն յերիցն առնձնացեալ զիմաց և ի նոյնացեալ ընութենէ և ի կամաց խսկապէս, և մի անշփոթ յերբարդութեանն անձնաւորութեանց իջեալ յերկնից, բնակեցաւ ի սուրբ յարգանդի Կուսին Մարիամայ Աստուածածնին, և այսպէս ստուգապէս մարմնազգեասեալ և մարդ եղեալ՝ տրար իւր ճանապարհ և գլամտեան և յայտնութեան։ որով մատոյց զինքն առ մեզ եղբարց նմանեալ և եղն որդի Դաւթի, որդի Արքայամու Այսպէս ի կուսական յարգանդէ և յախեալ մօրէ ծագեցաւ լոյս յաշնարհ, որ յառաջ քան զարուսեակն ըստ ինքնարբարառ բանին, թէ Ես լոյս յաշնարհ եկի Ըստ ոմին սակի և անհասանելին հասանի, անձառելին քարոզի, անթարգմանելին թարգմանի, բարձրեալն ի խոնարհ թափի, անսկիզբն սկսանի, անմարմին մարմնանայ, Բանն թանձրանայ, երկնաւորն երկրաւոր լինի, հոգեղէնն հոգեղէն, աներևոյթն երեւայթ, հինաւուրցն տղա։ Այսպէս իսկ Աստուածն յաւիտենական, միակն և անմատոյցն, ինքնազոյնն և ինքնիշնանն յերորդութենէն ծնունդն չօր՝ խոնարհեցոյց զերկինս և էջ \*\* և մարգացեալ մարդկապէս և զկերպարանո ծառայի զգեցեալ ընդ մարդկան շրջեցաւ, անբաժ ի հայրական ծոցոյ։ Եւ ըստ օրինացն կատարեալ զայն իսկ զսա դաւանէ եկեղեցի հեթանոսաց, ոչ աստուածութեանն միայն, քան զոր ոչինչ է կատարելագոյն, այլ և վասն մարդկութեանն օծելոյ աստուածութեամբն և եղելոյ, որ ինչ էօնն, և համարձակիմ ասել՝ զոյգ Աստուած ասէ զսա աստուածաբանութիւնն Գրիգորի Քան զի Աստուած ճշմարիտ անմարմին ի մարմնի երեեալ լինի՝ կատարեալ ճշմարտութեամք և աստուածային կատարելութեամք։ ոչ երկու դէմն և երկու բնութիւնս, քան զի ոչ գոյ \*\*

շնար քառա երկրպագեալ ասել՝ զԱստուած և զՈրդի Աստուածոյ և զմարդ և զՀոգի սուրբ սակս որոյ և նզովէ ոժն ի սրբոց զայնպէս ամբարշտեալան, որք մարդոյ աստուածային փառաբանութեան զնեն։ Դարձեալ ինքնին իսկ Տէրն փառաց զՀամազօր և զՀամապատի շնորհս մարմնոյն միաւորութեան ինքնարուն իմն ընդ ինքեան ասէ՝ իջեալ յերկնից ըստ մերքակ միաւորութեան։ թէ Ես Ես Հացն իջեալ յերկնից։ \* Եւ այսպէս ասի երկրորդ մնզամ և մարդ երկնաւոր երեւեալ յաշնարհի զի տնմահ և անապական էութիւն բանին խաւնեալ ընդ ապականացու և մաշկանացու գոյութեանս և վիշագոյնն ընդ վատթարագունիս զուգամատնեալ զերկուտն ի մի գոյացոյց, յեղափոխեալ ի ծայրագոյնն բարի, և անապական կազմեալ Աստուածացոյց։ Իսկ ապա յետ միաւորութեանն, որպէս ի բաց բարձելոյ յերկուս հատմանն՝ մի գոյլ պատմիմք հաւատալ զՈրդւոյ Օծութիւն, որպէս միոյ, սակայն մարմնացելոյ և մարգացելոյ։ Այսպէս բացեալ մեր զուշ մերոց ի տեսութիւն աստուածային խորհրդոյ՝ զերկուցանեմք \*\* արտայայտելով մարմնականաց զմարմնաւորութիւն անհիւթական բանի՝ ի նոյն ինքն զանցփոթ և զանցաժան միաւորութիւն զուշականութիւն երկաքանչիւրոցն անփոփոխելի բնութեանց ի մի բնութիւն շարադրեալ զուգընթաց երկնաւոր գոյականութեան։ վարըն զի բալորն Աստուածն բան զբոլորս մարդառեալ հոգով բանականաւ և մոօք և բովանդակ ամենայն կարեօք, բայց ի մեղաց, զի զբոլորն մեզ շնորհեացէ փրկութիւն։ Եւ այսպէս երկաքանչիւրոցն բնութեանց և կերպարանաց ի մի յատկական անձնաւորութիւն լինթացեալ կատարին ի մի դէմ և ի մի բընութիւն, մի Որդի, մի Քրիստոս, մի Տէր, միով երկրպագութեամբ պատուեալ։ Զի ըստ որում և անբաժանելի Որդի երկրպագութեամբ ի համապատիւ երրորդութենէն, սայապէս և անբաժանելի է յինքեան մարմնոյն համապատիւ \*\* երկրպագութենէ։ Այսպէս մեք ըստ Սիւնհոգոս Ժողովոյն, որ անուանի զուգաճանապարհ, խոսութանիմք զՈրդին Աստուածոյ՝ զծնեալն ի չօրէ միածին և զնոյն Միածին ի որբոյ կուսէն Մարիամայ, և ի մի ածեմք և ոչ զերկաւու որդիս անուանիմք, այլ մի և զնոյն նոյնացեալ միով բընութեամբ և անբաժանելի Աստուածութեամբը, և միով պատուով երկրպագեալ։ Իսկ առ

\* Թօվ. Զ. 41. \*\* օք. զեկուցանեմք. \*\*\* օք. երրորդութենէն համափատի պակաս:

որում թագուցեալ է ճշմարտութիւնն առաջին և զօրացեալ այժմ ու մարրութիւնս, որ զգիեալոն ծածկեն և զինքնիմաց տարասութիւնն ասել հրամայեն, որ ոչ ունին զարդան՝ ի գէպ առ նոսա բերի առաքելոյ բանն, թէ Զարմանաւը, թէ այսպէս վաղվազիի փոխիք յայնմանէ, որ կոչեաց ըզձեղ ի շնորհան Քրիստոսի, յայլ աւետարան, որ ոչ թերեւ գոյ այլ՝ \*\* բայց եթէ իցեն ումանք որ խոռվեցուցանել Հնարին զմանկունս մօք Սիոնի և կամ յեղափոխել զաւետարանն Քրիստոսի. սակայն և յայսմ ոչ աղքատացի որ մեծատունն է: Եւ արդհարցեալ զմեր \* ժողովարանս Քաղկեդոնի, որ ըստ տօմարին Աւանի \*\* գաւանս կրեն. թէ զրովիսիոք ստորոգեն բան զիանէն կենաց այսպէս յայտնապէս ասեն զինքնիմաց \*\*\* որոճովմն բանից ձերում. զի չէ սարողեալն, թէ մի գէմ է, բանին մարմնացելոյ, և մի անձն և երկուս ընութիւնս բաժանաժարարս և անհաղորդս միմեանց ի միւսմ զիմի: Եւ աշաւասիկ տեսանեմք ըստ բարեպաշտեան Քրիստոսեան հաւատայն՝ ամենայն իւիք, ամենայն ուրեք, ոչ երեւք երևեալ բաժինք անմահ ընութեան բանին և նորին և մարմնոյն: Եւ նախ յարտաքնոցն քերթողածաղկի վիխսովայից այս տեսցի, որք յաղագս բաժանման և ապացուցի սոցայն տեսութեանց համառօտ ընձեռնութիւն \*\*\*\* առնելով փորձեցան և զգէմ ի ընութեան գոյ ասացին ենթակայացեալ ըստ մեծի պիտեցելոյ խուզման և ըստ բոլոր յեղանակի, և ամենայն իրօք իրազգած լինին ընութեան զգէմ պարունակեալ և ոչ թէ զիմի զընութիւն:

Խակ եթէ այսպէս է, որպէս և է իսկ, անհնար է ապա ի միւսմ զիմի երկուց ըընութեանց գոյանալ, և հարկ է երկաբանչիւրցն ընութեանց երկուս զէմն միանգամայն շարադասել: Եւ այնուհետեւ նեստորաբար իմանի նոցա զնել զիմասկ ընդգէմ երից սրբոց ժողովայն ողջախոչ և միատարր խոստովանութեան: Եւ յետոյ թերեւս ի զգուումն եկեալ կամին ընդ Նեստորի զոյ ուղղագոյնն չարափառապէս յանձն առնուլ և տեղի տալ, քաջ ախորժելով և չորրորդութիւնն յերրորդութիւնն փառաբանութիւն մուծանել: Դարձեալ թէ և զերկու ընութիւնն բռնազրօսաբար ի միւսմ զիմի ախորժեն յարակայել՝ ոչ մինչ այնպէս թերեւս կարիցեն յուցանեն կատարելութիւն ի նմա: Զի թէ ի կուսէն ծը-

նեալն այլ ոմն, և այլ յերկաքանչիւրմ բաժանաբար իմանի, և ոչ նոյն ինքն Աստուած կատարեալ և մարդ կատարեալ՝ միով ըընութեամբ, ապա ի միւսմ զիմի միւսն միւսմ \* տէր համոդիպի գոյ և միւս ծառայ: Եւ որպէս այս ըստ նոցա իմանի ասացուք: Գրեալ է, եթէ հանէր Յիսուս զգիշերն ի գլուխ յազօմն Աստուածոյ: Արդ, արգեօք ի միւսմ զիմի ընութիւնն մարդկային զընութիւն զի մի մատնեացի խաչին: թէ այսպէս է՝ պարտէ բանին աղաչէր, զի մի բնութիւնն տէր միւսոյն, և մինն ծառայ յարմարեսցի: Եւ այսպէս խօրհուրդն յերեայթս ածէ, թէ ի միւսմ զիմի մարդկայինն ընութիւն զաստուածայինն աղաչէր, այսինքն թէ զինքն և այսպէս յաւէտ իմն ի բացեայ ի ճշմարտութենէն բերի և միայն ի հրապարանս զպարզամիտան արկանէ: Դարձեալ, զիարդ ի միւսմ զիմի երկու ընութիւն ասի ապատակիլ և խաչի: Եթէ այսպէս սակայն ի բացեայթս ածէ, զմի գէմ որում յերկաքանչիւրց կամին խոստովանել՝ Աստուածութեանըն եթէ մարդկութեանն: Եթէ Աստուածութեանն գաւանեն, զմարդկայինն կորուսանեն զգէմ, և եթէ մարդկութեանն, ապա այսպէս օտարութիւն իմն արկանեն ըստ Աստուածն բան և ընդ իւր մարդկութիւնն, որպէս ի մարդարէ կամ յայլ ոմն տրդար երբեմն ընակեալ և երբեմն զնացեալ: Ասպ ըստ սիմն ասկի և ընդ մեզ ևս է մինչ ի կատարած աշխարհի: Եւ այսպէս դարձեալ յարոշել զիմաց երրորդութեանն՝ տար սրոշ ընդ նոցա ցուցանի Բանն Հօր: Եւ դարձեալ նորին իսկ ոչ զկատուած պարտին ասել խաչել վասն աշխարհի, այլ մարդ սոսկի, և միայն յարելութեամբ առ բանն մերձեցեալ, և զիփակութիւն մարդկան մարդով նզեալ և ոչ Աստուածով՝ որպէս Նեստորի և Թէոդորիոսայ և Պատլեայ Սամոստացւոյ համայ թուի: Ապա ժամ է նոցա աստանօր զաստուածաբարսութիւնն Ազիազենն Արիթորի ունայնաբանութիւն իմն և յոշինչ պէտո վարկանել: զի ի մեզագրութիւն մատուցեալ նոցա ասէ: Հիմ մերժէք ի լինելոյ Աստուած ճշմարիտ զայն, որ ի կուսէն ծնեալ ճշմարտապէս Աստուած և չարչարեալ: Եւ այլուր, թէ Որ ոչ խոստավանի զիաչեալն գոյ Աստուած, նզովեալ կարգեցի ի ընդ աստուածապանուն: Եւ դարձեալ թէ Զինչ քան զայս հրաշափառապէս զինչ զինչ աւազակն տեսանել և զնոյն ընդ աւազակն և մերձ անցուզացն ծալլ լեալ, անմըրունելոյ և քան զկրել ինչ ախաս բարձրագունին: Եւ այլուր, թէ Արիւն

\* Ֆաղ. Ա. 6: \*\* Օր. պահաս զմեր: \*\*\* օր. և Լետնի: \*\*\*\* օր. զինքն ի մոսպ: \*\*\*\* օր. ընմեռնութիւն:

Աստուծոյ և չարչարանս և մահ լսելով մի ի վայր անկցիս անաստուածաբար իբրև Աստուծոյ ջատագով Եւ արդ, ի բաց այսուհետեւ ի մէնջ տարամերթեալ զտարաշանելի սաստանող ընկղմելութիւնս բանից: Այսպէս ի ինձ իմա զուղափառ հաւատոյն գաւանս սակս միոյ Հօր Բանին, որ փոխանակ ամենեցուն մեռաւն: \* վասն զի ի մարմին իւրում զոր առ ի կուսէն, անքակ միացաւ, և միանալն յայտնապէս ցուցանէ զբութեանցն անքակաթիւն և զմիութիւն: Այսպէս իմա զբանն մարմին եղեալ և բնակեալ ի մեղս ոչ եթէ շրջել ինչկամ յեղափախեալի մարմին, այլ մարմին վասրն մեր միացուցեալ իւր զմարմինն՝ եղեւ մի Տէր, մի Աստուած, Յիսուս Քրիստոս: Ոչ ի կատարումն ինչ Բանն մարմին եղեւ, զի կատարեալ երրորդութիւնն ոչ ընդունի զյառուելուած և ոչ թերութիւն, որ միշտ ի կատարելութեան իւրում է, այլ մարդկութեան ընութեանս եղեւ յաւելուածս հաղորդութեան և դաւանութեան Բանին: Եւ այսպէս նովին մարմնովն վերացեալ անց ընդ դրունս երկնից և եղեալ նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունաւ իսկ որք ոչ այսպէս ընդ մեջ հաւասարեալ գաւաննեն զՔրիստոս ըստ մարմնոյ, որ և ի վերայ ամեննեցուն՝ Աստուած օրհնեալ յաւիտեանս, այլ երկու ասեն ընութիւնս՝ Հարկ է նոցա զմինն երկրպագելի ասել և զմինն ոչ և ապա յաստուածայինն: \*\*, որ երկրպագելին է, մկրտիլ իսկ ի մարդկայինն ոչ մկրտիլ: Իսկ եթէ ի մահ անդր Նորա մկրտեցաք \*\*\* ըստ գրեցելումն, ապաքէն մի պարտ է խստովանել ընութիւն զանախտակիր աստուածութեան և զախտակիր մարմնոյն, որով մեռաւն վասն մեր: Քանզի ի մահ նորա մկրտութիւն ի մարմնոյ յարութիւն և ի թողութիւն մեղաց լինի տուեալ, Մահ ասացին նմա զիրք, այլ ոչ խախտումն և ասպականութիւն, զի մարմին ապականացու ի ձեռն զօրութեան Բանին եղեւ անապական, և յաղթահարեցաւ մահ ի ընութենէ մարմնին մահկանացուի: Այսպէս մեք զԱստուած ասեմք խաչեալ ի շրէից և ոչ զմարդ միայն և ոչ զԱստուած միայն՝ այլ զմարդ և զԱստուած: Դարձեալ չիք հնար մահ ասել Աստուածն Բանի, բայց եթէ ի մարմնի ըմբռնեցի, և չիք հնար անմահ լինել մարդոյս ընութեան, բայց եթէ Աստուած

մարդացի: Եւ այնուհետեւ պարտ է ամենայն իրօք, զի վասն անմահին մահկանացու անմահացի և վասն մահկանացուիս Աստուած իւր զմահն համարեցի: Այսպէս յերկուց \* բնութեանց մի բնութիւն Բանին մարմնացելոյ խոստովանի ամենայն աստուածասէր հոգի: ըստ որում և միտք մարդոյ ոչ բաժանի յիւրամէ մարմնոյն, այլ մի դէմ, մի բնութիւն բովանդակ մարդն: Քանզի յիրկուց միացեալ՝ որպէս մի ճառեմք զԱստուած Բանն մարմնով իւրով չարչարեալ վասն մեր շամայն ոչ եթէ զըեւուսն ընդ մարմնոյն ի զօրութիւն Բանին մոտանել ասեմք, որ և ոչ ի հոգի մարդոյն: Զի թէ հոգի մարդոյ ոչ ըմբռնի, ապա որչափ ևս առաւել զօրութիւն Բանին կը թէպէտ և հատանի ոտն մարդոյ, զհոգին ոչ կարէ կաղացուցանել՝ և թէ զաջս ոք խլէ, զոգին ոչ կարէ կուրացուցանել այլ հոգւոյն աչօք յուրագուցանելու այլ հոգւոյն աչօք յուրագուցանենս տեսանէ: Եւ գարձեալ հոգւոյն ընդ մարմնոյն մեռանել ամենայն աստուածաշունչ գիրք ոչ առնուն յանձն ըստ տէրունեան բանին: Թէ Սի երկնչիք յայնմանէ որ սպանանեն զմարմին և զոգի ոչ կարեն սպանանել, \*\* վասն զի յորոշել հոգւոյն մեռանի մարդն, սակայն հոգին որ ի նմա ոչ ի կորուստ ինչ, այլ ի գաղարս իւր մեռանի կենդանի:

Այսպէս Հօր անապական Որդին ոչ մեռանի ընդ մարմնին նւրոյ այլ ի ձեռն անապական մահուն իւրոյ զառ ի մեղ մահն իափանէ, և զսմանս արգեամբք յարութեան և զոմանս աւետեօք կենդանիս առնէ, և զապականեալ ստեղծուածն նորոգէ և հանէ ի վիաս մարմնոյ նւրոյ: Դարձեալ ինքն Տէր բարձրութիւն զխացն անուանէ և ի նմանութիւն ինքեան բերքան բերէ զառ ի Մովկէսէ եղեալլն \*\*\* օձն պղնձի: զի անդ խորհուրդ գուշակման և աստ յայտնութիւն ճշտութեան ի ներքս մուեալ անէ (°), զի որք ըստ մարմնոյ՝ և զմարմնաւորութիւն Բանին միայն տեսանէ ի խաչին, ըստ օրինակի սակի որ յանապատի անդ նորին իսկ յերկրայտութենէ թերահաւատութեանն մեռեալ լինին հոգւով իսկ որ ոչ զմարմինն և եթ միայն զգալի աչօք տեսանեն, այլ ընդ նմին մարմնոյն և զաներեւոյթ աստուածութիւնն իմանալի աչօք իմանան՝ սեւեռալ ի խաչին, ոչ մեռանին նոքա երկմատութեամբ զմահն մշտնշենաւոր, այլ հաւասարեալ ընդ մեղ ասացեն, թէ խաչիան է Աստուած և ընդ խաչելոյն յառնին՝ որպէս և նա ետ \*\*\*\* երից աւուրց: Զի ե-

\* Բ. Կորնթ. Ե. 1: 1: \*\* օր. աստուածապինսն: \*\*\* Հը-  
ռում. Զ. 3:

\* օր. Արկուց: \*\* Մատթ. Ժ. 28: \*\*\* օր. Եղեալ,  
\*\*\*\* օր. յատ:

թէ մինն փոխանակ ամենեցուն մեռաւ՝ ապա և ամենեքեան մեռեալ էին, և ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն, ոչ միայն անձանց և եթ իցեն կենդանիք, այլ այնմ որ ի վերայ նոցա մեռաւ և յարեաւ:

Արդ այսպէս անչարչարելի անմարմին բանն Աստուած ի մարմնի գոլով ոչ է մարմին նոյն ինքն բանն, այլ մարմին է բանին ընդ ինքեան միացուցեալ և սակա այսորիկ իւր իսկ հաշուեալ համարի զիւրոյ մարմնոցն չարչարանս, և ինքն աներեւ ոյթ և անչարչար է: Ուակայն և անչօշափն և անբրոռնելի զօրութիւն բանին, ըստ Խրումն հաշուելոյ զիւրուն՝ ասէր մարգարէիւն. Զթիկունս իմ ետու ի հարուածս և զծնօտս իմ ոչ գարձուցից յամօթոյ ընդ երեսս թքանելոյ: \* Այսպէս նոյն ինքն \*\* բանն բանին տառուածեղինի զմեզ ընդունիչս արարեալ նին ի չարչարելումն անչարչարական իմանի, և միացեալ ի չարչարականին մարմնի չնչէ և ապականէ զտկարութիւն ապականութեան մարմնոյն և զգեցուցանէ զանապականութիւն և զգօրութիւն, և այնուհետեւ ոչ կարպանաց մահկանացուս զանմահն ի մահ զրաւել, այլ անմահին զմահ ի բաց ջնծեալ զմահկանացուս ընդ անմահին միաբանէ միով բնութեամբ, և անմահ յարգարէ, և մարմնովն հւրով զայսպիսի անմահութիւն մեզ շնորհէ ըստ առաքելաւանդ բանին, թէ Պարտ է ապականացուիս այս զգենուլ զանապականութիւն և մահկանացուիս այսմիկ զանմահութիւն: \*\*\* Խոկ թերեւս ասից ոք, թէ ոչ է զօրութիւն և բան չօք ի խաչելութեան. ասեմք, թէ այս էր, ոչ զրեւեարս չարչարանացն կրեալ \*\* կամ զիսոցումն զեղարգեանն, այլ կենդանի միշտ գոլով կըրեաց մարմնով զչարչարանան, և անարգանք խաչին համարեցաւ Տեառն փառաց: Ոչ թէ զիանն խաչեցին, այլ զիանն անարգեցին և զմարմին բանին ի խաչին ըեւուեցին. զի Աստուած էր, որ անարգեցաւն, և հոգւոյ և մարմնոյ Աստուածոյ եղեւ չարչարանիքն և մահ և յարութիւն: Թքին ընդ երեսս և ծեծեցին եղեգամբ զգլուին. ազդ ցաւոցն \*\*\* մարմնոյն, և անարգանիքն զօրութեան բանին համարեալ եղեն: Ոչ նոււղեցաւ լոյսն և ոչ զիջաւ Արգարութեան Արեգակն, այլ զարգարեալ միայն ի շարժելոյ զմարմինն եռօրեայ թաղմամբն. Խիստանութիւն ունիմ առէ, զնել զանձն իմ և իշխանութուն ունիմ առ-

նուլ զնաւ: \*\*\*\* Ամենայնիւ յամենայնի բաւական էր, ի գժոխս էջ, այլ զմեռեալմն արտաքս եհան ի բանտէն, և ի տանէ կապանաց ի գրախան չոգաւ, այլ զաւազակին զաւետիսն հաստատեաց: Քաղցեաւ, այլ զինդգիշարս յերիս գարեղէն նկանակէ կերակըրեաց: Ճարաւեցաւ, այլ զջուրն կենդանի Ասմարացւոյ կնոշն արբուցանէր, վաստակեցաւ, այլ պարարառնայր զտաժանմանն լուծութիւն գարշապարաց մերոց, որ ի թիւնարերան թշնամոյն. չարչարեցաւ, այլ խրատ խաղաղութեան մերոց ի նմա և նորա վիրօքն բժկիցաք ամենեքեան. խաչեցաւ այլ որ կայրըն մեզ հակասակ՝ երարձ զայն ի միջոյ և բենուեցաւ ընդ խաչափայտն. Եղեւ վասն մեր անէծք, այլ զմեր անէծքն յանձն իւր ընկալաւ և ընդ մեր անիծիցն պարտուց ինքն չարչարեցաւ. մեռաւ, այլ ի ձեռն մահու Տեառն մահ մեռաւ և կեանք թագաւորեցին: յարեաւ և ընդ ինքեան յարոյց զմեռեալս յԱգամայ և կենագործեաց ի կեանս անմահըս: Սակայն այսպէս գոլով ի մարմնի ոչ կորոյս զանմարմնականն, այլ կաց մնաց որ ինչ էրն, և եղեւ որ ինչ ոչն էր: Եւ թէպէտ կարող էր ազատել զմարմինն իւր յամենայն կարոտութեանց, սակայն լծեաց զնա ընդ լրծով կարօտութեան և թոյլ ետ մարմնոյն զիւրոն կրել: Եւ այս յայտնի անմահնէն և ի զարգանալոյն է նորա, ի արտմելոյ ոգոյն մինչ ի մահ, յասելոյն թէ Մարմինս տկարէ: ի ցուցանելոյ զերկիւր մարդկեղէն ընութեանն, ի քրամանէն որ իջանէրն, յրմրունելոյն ի վիրացն, յապատկացն, ի չարչարանացն, ի մահուաւնէն և այլ ինչ խոնարհագունից, որ մարմնոյն ընութեան են նշանակիչք, զի յայտնապէս ցուցցի մարմին և հոգի և միտք և ամենայն ինչ, որ է ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք: Այսպէս մեռաւ նա ճշմարտիւ, որպէս զմորդ ճշմարիտ և ըսմեռաւ ճշգրտիւ՝ որպէս Աստուած: զի ոչ կերոյս զանմարմնականն և զստառաւածականն, վասն զի մի զօրութիւն իսկաւթեան չօքէ և մի իմաստութեան աէրութեան: Բան անըմբը ընելիք, լոյս անզնելիք, պարզ իբրեւ զծնօղըն, ծածուկ իբրեւ զչայր, աներեւ ոյթ յաներեւութէ, լոյս ի լոյս Աստուած յԱստուծոյ, անբաւ, անչաս, անչափ, անանց, անժամանակ, անսահման, անեղ, անարատ, անսկիզն, անկատարած, անճառ, անքննին, անտես, անզնելիք, անյօդ, անշարժ, անբավմնակելիք, մեծ քան զամենայն և քան զրնաւոյ կարող ամենայնից և բաւական ա-

\*\*\* Խայի ժ. 6; \*\*\* օր. նոյն. միակ:

\* Ա. Կոթնթ. Ժ. 55: \*\* օր. կրեաց: \*\*\* օր. ցաւոց:

մենեցուն, և ամենակալ ի վերայ ամենայն երեւելեաց և աներեւութից: Այսպէս հաւասրութիւն առուածային բանին չօր ոչ անակեալ առանձնաբար բնդ չարշարանօք, այլ զմարմնոյն իւրոյ չարշարանս իւր վարկեալ վասն զի Աստուծոյ մարմին էր և ինքն յիւրում ամբողջ կացեալ միացեալ և յորմէ ծնեալն էր բնդ նմին անբաժանելի և բնդ նմին յաւիտենական է: Յերկրի բնդ մարդկան շրջեցաւ և յերկինս ամոռու իւրումէրի վերայ խային թեւեաեալ և բնդ ամըմէ չօր նոտէր, ի գերեզմանի եղեալ և ի ծոցոյ չօր ոչ մեկնեցաւ, այլ և ոչ թերեւս ի մահկանացու մարմնոյն: Այսպէս իմասդիս ի վերայ Քրիստոփի զառառութութեանն բնութիւն, զիւր գերազարդ գերունականութիւն՝ անուշահութու բուրելով աշխարչի:

Խոկ յաղագս սրբառացն կցորդին որ ըստեռակի անուանցն մարմնացելոյ Բանին ի վերայ բերեմք զբաշեցարն՝ այսպէս ոմանց իմանի, թէ սուրբ Երրորդութեանն զնացն սահմանեալ կամ կազմեալ ախորժեմք: Թէ այդպէս է, յերաւի խորշին և մերժին ի մէնց իմաստութիւն յօւնաց, որք առեալ կատարեալ իմաստութիւն՝ անհանճարք եղեն, սակայն ըստ Հաճոյական և իւրեանցն մտացոծին բարուց ոչ կարեն զմեղ մերձ կացուցանել առ Հերձուածրներն զոր ոչ է ձանուցեալ մեր: Վասն զի յեկեղեցիս որբոց ոչ երրորդութիւնն թերեւս զայր փառարանութիւն վերաձայնեալ մատուցանեմք, այլ Որդւոյ միայնոր զի որպէս րդմարդանալն ի կուտէն Որդւոյ միայնոր հաւատամք, սարապէս և զնացն և զմահ Որդւոյ խօսառվանիմք: Այսպէս և Համարձակախուն Եսայեաս յամոռու բարձրութեան և վերացելոյ զմրդի տեսանէ նոտեալ և նմա սրովքէագոյ ձայնն զերեքսրբեանն աղաղակեալ սրբասացութիւնս ըստ որդւոյն Որսուման Յովհաննու աւետարանութեանն: Թէ Վասն այսորիկ ոչ կարէին հաւատալ ի Յիսուս, զի կուրացոյց զայս նոցա և ապշեցոյց զմիտո նոցա, և թէ Զայս առաց Եսայի, զի ետես դիմառ նորա և խօսեցաւ վասն նորա: \* Եւ այսոր աղագու միանգամցն իսկ երիս սրբասացութեամք զմրդի փառարանութիւնն խորհրդով, ըստ որում և իգնատիոս հետեղոյն առաքելոց տեսանէ զօրս երկնաւորս, զի ի վերայ Որդւոյ նոյն սրբասացութիւն բնձայեցուցանէին, այսինքն Տեսան փառաց ի խաչելելոյն: Եւ ըստ ոմին սակի ամենայն եկեղեցիք քրիստոսի ի ժամ սրբոյ պատարագին զերիս սրբասացութիւնս ի վերայ

Ոոդւոյն կանոնեալ \* երգեն ցնծութեամք և ուրախութեամք: Եւ սուրբ Հայրն մեր և ծնօդն ըստ աւետարանին Գրիգորիոս աստուածահրաշ պատգամացն վարդապետութեամք զոյն երիս անուանակոչութիւնս ի վերայ միոյ Քրիստոսիս սահմանէ: Տեսանէն ասելով, զի աստուած և Հզօր և անմահ և Հայր Հանդերձելոյ աշխարհին՝ զայս օրածին մանուկս անուանէ, զոր և ուղղափառ գաւանողք զերիս անուանս զայսոսիկ, մի մի ի վերայ յարաբարգելով միոյ մարմնացելոյ բանին՝ ամենայն շունչ բարերանէ յասել անդ սուրբ Աստուած զմրդի և սուրբ Հզօր զորդի և սուրբ անմահ զմրդի, որ խաչեցար վասն մեր, զի ողորմեցի մեզ մարդասիրաբար, զանմահն Աստուածն բանի և զիաչեզարն ըստ մարդկութեանն միում անձին եղելոյն: Խոկ զինի բանին, թէ Այս է ամենայն երկիր փառօք նորա՝ ըստ ուղղափառ գաւանութեան եկեղեցւոյ այսպէս իմանի, թէ Երրորդութեանն փառաւորութիւն յերկրի ի ձեռն մարդանալոյն Տեսան Տաղկաւէտեալ ճօխանոյն ըստ որում և Տէր: Խոկ առ Հայր առեր: Ես զեկ փառաւորեցի յերկրի, և յայտնեցի զանուն քո մարդկան: \*\* Եւ գարձեալ Հայր զորդի թէ փառաւոր արարից: \*\*\* Այսպէս փառաւորութեան մարդանալոյն Տեսան ի փառաւորութեան Երրորդութեան միաւորեալ ցուցանի: զի միութիւն երբեակ և երբեակ ի միութիւն կատարի: Այսպէս մեք յետ երբեկի սուրբն ասելոյ՝ անմահ խաչեցար ասեմք անհանճարչ Բանի և խաչեցար մարդկութեանն՝ միում անձին եղելոյ, և որոշեալ զիմաց անհնաւորութեան Որդւոյ ի Հօրէ և ի Հոգւոյն սրբոյ և զնոյն խաչին նմին իսկ փառս անուանեմք: Որպէս ինքնին իսկ աղօթէր, թէ փառաւորեալ զիս Հայր, փառօքն զոր ունէի յառաջ քան զինելին աշխարհիալիքն: \*\*\*\* Այսպաքէնաւասիկ խաչն է փառք: Եհաս ասէ, ժամ զի փառաւորեցի Որդի մարդոյ: Եւ գարձեալ, եթէ Փոքր մի խոնարհ քան զիրեշտակս \* տեսանէմք զիխուս վասն չարշարանաց խաչին փառօք և պատուով պատկեալ: Արդ այսպէս մեք միայնոյ Միածնի Որդւոյն մարմնացելոյ Որդւոյն զիխուս գաւանալ երգեմք, որ անհասանելին է գիտութեամք և արարչութեամք ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյն, որ ընդ ամը Հօր նստի միացելով մարմնով իւ-

\* օր. կանոնեալ նս: \*\* Յոհ. Ժէ. 5 և 6: \*\*\* Յոհ. Ժէ. 28: \*\*\*\* Յոհ. Ժէ. 5 \* Եղ. թ. 7:

բավի և դատաւոր է և ժառանգ և միայն խկզրանէ առ Աստուած՝ Բանն Աստուած և լոյս ճշմարփաւ: Խոկ որք ոչն ախորժեն զմարմինն Քրիստոսի ի վառս Երրորդութեան բարձրացուցանել և ոչ զԱստուած ասեն խաչեալ այլ մարդ սոսկի և զատանեն զջիս ի Քրիստոսէն, և երկու անձինս յայտնեն՝ զուն չարչարելի և զուն անչարելի, և ոչ ասեն զՄիհածին Օրդին Աստուածոյ, միացելով մարմնով Խրոսի խաչեալ և չարչարեալ և մեռեալ և յարեալ և նստեալ ընդ աջմէ Հօր՝ ոչ է նա այն, որ անուանեալն կոչի այսինքն Քրիստոնեայ, և ըստ Պօղոսի՝ կրից գատաստանս, ո ոք և իցէ: Խոկ մեք յաւէտ յարմարական և յիրաւի և վայելուչ դոյ ասեմք զարպասացութիւնն միոյ յանձնաւորութեանն յԵրրորդութենէն մարմնացելոյ Բանին, որ է մի Տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, որ վառաց և զօրութեան դՔրիստոսի անուն յինքն պարունակէ: որ ոչ սոսկ մարդ, այլ Տէր վառաց, որ վասն մեր խաչեցաւ որ ոչ թերեւս այլ ինչ վառարանութիւն ի ներքս բերի, որով վառարանի խաչեալն և այլ որով վառարանի Բանն յԵրրորդութեանն, որում կրկնի ամենայն ծունդ երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց: \*\*

Այսպէս ես զայս սակաւուք ինչ ձեզ հարկեցայ գրել, զի մի լուսութեամբ տրտմե-

\*\* Փելմա. Բ. 40:

ցուցից զձեղ աղայեմ զի աստուածասիրաբար բարեկամութեամբ և իմաստակիր մասուրութեամբ ընկալֆիք զառ ի յինէն ասացեալ, և եթէ զիր բանից տպիտաբար ինչ լսելեաց ձերոց ձեքիցի, \* զՀասարակաց մարմնոյս բնութեան ակարութիւն և զագիտութիւն ծանուցեալ շնորհէցէք մեզ: Եւ թէպէտ և իմն ըստերիւրին իմացմանը, այլ հաւատամ ոչ միանել, կամ թիւրմլ որտից ձերոց, որ էք խոկ հաստատուն սինքը եկեղեցւոյ, այլ ախորժաբար և բարւոքապէս խրատեալ և յանդիմն կացուցանել զասումբն ասողիս, և սրտիւ հաւատալ յարդարութիւն և բերանով խոստովանիլ ի փրկութիւն, զի հաւատով վառաւորեսցի ամենեցունցն Աստուած, և ոչ քննութեամբ ինչ ի վերայ բնութեան աստուածութեան հասեալ խրսխարիցիմք: Այսուհետեւ կրծիմն բարձցի և գանձն քակեսցի և միջնորմն յատակեեցի և իւրաքանչիւր ոք ի մէնջ հաստատեսցի ի մի նոր մարդ, յոր կոչէալ ծննդեամբ սուրբ տւազանին, և ազօթանուէր բանն տերունական ի մեզ յագրաեալն էր գործեսցի: \*\* թէ Որպէս Եօւ Հայր, ի քեզ և Դու յիս կամիմ և սորա ի մեզ իցեն: \*\*\* Այսպէս եղիցուք կատարեալք ի մի ամենայն հաւատացալք մարմնացելոյ Բանին կինաց, և վառարամետականաց: \*\*\*\*

\* օր. Ժերեսից: \*\* Հում. Ժ. 10: \*\*\* Պէտք է լինէր երեւի, Ներգործնեցի: \*\*\*\* Ցում. Ժ. 21: \*\*\*\*\* օր. Արոյ, այժմ եւ մշտ եւ յափտեանս յափնենից, ամէն: - Զայս թութիս սուրբն Ներսէ Լամբրոնացի համիկոպոս տարեալ նույն ի Կոստանդնուպոլիս Հռամանաւ Գրիգորի կաթողիկոսի եւ Լեռնի բաթեպաշտի արցային:

## Ա Ն Ա Ն Ի Ա Շ Ի Ր Ա Կ Ա Յ Ց Ի Բ

Եիրակացու վերին աստիճանի հետաքրքրական երկասիրութիւններից մէկն է անշուշտ նրա Թոււարանական Խնդիրների Փողովածուն, որ կրում է Յաղագս Հարցման և Լուծման վերնագիրը, Նշանաւոր ոչ միայն իրրե առաջին թուարանական աշխատանքը մեր հին մատենագրութեան մէջ, այլ մանաւանդ իրրե պատմական, տեղագրական սովորութեանց ու բարքերի վերաբերեալ տեղեկութիւններով լի և հոծ մի զրութիւն, որ տալիս է մեզ միանդամայն և նոր բարերի ու տերմինների բաւական մեծ քանակութիւն և ընդլայնում է մեր տեսութեան սահմանները, այդ անցած գարերի վերաբերութեամբ:

Բոլոր ջանքս է եղել բնագիրը յաղի վերճանել և ճաշել: Երկու տարի առաջ ինձ յաջողեց գտնել Ծիրակացու այս երկասիրը թեան մի օրինակը Գեղարդ Կաթուղիկոսի Յուղացիում՝ այս Հրատարակութեան Ի օրինակը—որ սակայն սիսալաշատ էր և կարօտ մեծ սրբագրութիւնների, Այրբենական թուանշանների սովորական շփոթութիւններից ( գ—գ, զ—զ, Մ—Տ—Ռ, Կէն ) առաջացած զրիպակների ուղղելլ, Հաւանական ենթաղրութեանց վրայ հիմնուած՝ չէր բաւել անշուշտ, եթէ չունենայինք Լուծմանց մէջ և պատասխանի թուերը, որոնք և իրրե Հաստատուն կուռան ծառայեցին ինձ վերականգնելու համար տառերի շփոթութիւնից առաջացած զրիպակների մեծագոյն մասը ամենայն յաջողութեամբ:

Հայր Մերսովքը, որ ներկայ էր յինում շատ անգամ իմ մանրակրիստ ջանքերին, ուղղուած այս թուարանական խնդիրների բնագիրը վերականգնելուն, ցոյց տուեց ինձ մի նոր լաւագոյն օրինակ այս գրուածքի, որին իկն հանդիպել էր ժողովածուները ցուցակզրելիս, որով և գործը մեծապէս դիւրացաւ: Այս նոր օրինակը—Հրատարակութեանս և օրինակը—ոչ միայն զլսովին արդարացրեց իմ բոլոր սրբագրութիւնները, այլ և պարզեց մնացած մուտք